

# ՃԱՓՈՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Հստ Հեսսէ Վարտէզի

Եւրոպացի ճանապարհորդին կղզիների այդ երկիրը եռում է ինչպէս մի մեծ մանկական պարտէզ։ Անտեղի տնակներն այնպէս փոքրիկ ու նուրբ են, տան իրեղէններն այնքան սիրուն են, կարծես խաղալիքներ լինին. պարտէզները, որ շրջապատել են այդ տներն, այնքան հիանալի՛ են իրանց խուզած ծառերով, առուակներով, ճակներով ու ճահճուաներով, որոնք միմեանց հետ միացած են կամուրջներով. տեղ տեղ երեւմ են նոցա մեհեանները, և այդ բոլորն այնպէս փոքրիկ չափերով ու գեղեցիկ են շինուած, որ թւում է թէ ոչ մարդկանց, այլ խամաճուկների համար են դոքաւ եւ յիշաւի, Ճափոնիայի հասակաւոր մարդիկ շատ կողմերով երեխայի են նման. այնտեղ կարելի է գեռ որոշել, թէ երբ է սկսւում երեխայութիւնը, բայց երբէք իմանալ չի կարելի թէ երբ է վերջանում։ Մէկ խօսքով Ճափոնիան կարծես մի դրախտավայր է երեխաների համար։

Նորապասակ զոյգի ջերմ ցանկութիւնն է զաւակ ունենալը, և երբ ընտանիքի մէջ աշխարհ է գալիս այդ ցանկալին, նադանում է ծնողների պարծանքը և ամենաթանգարին գանձը. Ճափոնացի հայրը մինչև խորին ծերութիւն չի աշխատում, որպէս զի պահէ իւր որդոցը, այլ ընդհակառակը վերջիններս են կերակրում իրանց հօրը։ Հէնց որ ընտանիքի մեծը ծերանում է, նա իւր ունեցած կարողութիւնն ու տան գործերի բոլոր հոգսը յանձնում է անդրանիկ որդուն, իսկ ինքը իւր կեանքի մասցըրդն անցէ կացնում հանգստութեան ու անդորրութեան մէջ։ Ճափոն ծնողներն ապագայի մասին մտածում են առանց վախի, որովհետև նոքա համոզուած են թէ իրանց արածների փոխարէն զաւակները տամապատիկը կըհատուցանեն և ծնողներին կը շրջապատեն որդիական սիրով ու յարգանքով։

Երեխայի ծնունդը մեծ ուրախութեամբ է ընդունուում,

մանաւանդ հթէ անդրանիկը տղայ է։ Այդ ուրախ դէպքը իմացնելու համար իսկոյն խնդրակիներ են ուղարկւում բոլոր բարեկամների ու ծանօթների մօտ, և բաղդաւոր տունը կարճ ժամանակից յետոյ լցուում է հիւրերով, որոնք գալիս են շնորհաւորելու թէ երեխալի ծնունդը և թէ տեսնելու փոքրիկներ։ Ամենքի դէմքի վերայ փայլում է ուրախութիւնը. միայն նոր աշխարհ եկած քաղաքացին է, որ իւր կեանքի առաջին օրերը շատ դժգոհ է մնում թէ ինչու իրան անհանգիստ են անում ու ձեռքից ձեռք տալիս և այն անթիւ ընծաները, որ ստանում է, ամենեին չեն հետաքրքրում նորան։ Այդ նուէլները կամ շուրացու զանազան տեսակ կարոներ են կամ խաղալիք կամ թէ ուտելեղէն, պաշար, ինչպէս օրինակ ձու և այլն։ Այդ բոլոր ընծաները կարգին կերպով փաթաթուած են լինում թղթի մէջ և կապուած կարմիր ժապաւէնով, նոյն այդ կապոցից կախուած է և մի փոքրիկ փաթեթ, որի մէջ կայ մի կտոր ձուկ, առանձին կարմիր թղթով փաթաթած։ Նախապաշարուած ճափոնացիք համոզուած են թէ ձուկը բաղդ է բերում։

Երեխային ծննդից եօթ օր յետոյ հայրը, կամ տան բարեկամներից մէկը նորան անուն է դնում, որը լինում է սովորաբար նորածնի հօր անունը քիչ փոփոխած և կամ նախնիքներից որևէ մէկինը։ Իսկ եթէ փոքրիկն աղջիկ է, նորա անունը դնում են բնութեան երևյթների կամ ծաղիկների անուն, ինչպէս օրինակ՝ գարուն, արևի փայլ, ոսկի, ինձորի գոյն, խրիդանդէմայ (նունուփար), շուշան և այլն։ Անուն ստանալուց յետոյ նորածին մանուկը գրուում է ոստիկանատան գրքի մէջ, ապա մի մեծ ճաշկերոյթ է սարքուում բրնձից ու կարմիր լորուց, և ահա բոլոր ծէսը վերջացած է։ Թէկ այդ օրն էլի մէկ գործ է կատարւում. երեխայի մազերը գերծում են բացի մի կտորից, որ թողնում են գագաթի վերայ. եթէ երեխայի մայրն ուղենայ, գլխի վերայ մի քանի տեղ թողնում են այդպիսի մազէ քննչիկներ, որ ճափոն մանուկներին շատ զուարճալի տեսք է տալիս. Բայց երբ երեխաներն սկսում են ուղումնարան գնալ, այն ժամանակ գլխի մազերն այլ ևս չեն գերծում։

Երեխայի ծննդեան տամներեքերորդ օրը տեղի է ունենում մի կրօնական արարողութիւն, որն այսպէս է լինում, փոքրիկն տանում են մեհեաններից մէկը և, յանձնում են շատուածներից մէկի հովանաւորութեանը։ Այդ նոյն օրն էլ երեխայի ծնողներն ընծաներ են զրկում նոցա բոլորին, որոնցից ստացել են փոքրիկի ծննդեան օրը. ուղարկում են բրնձից պատրաստուած քաղցր խմորեղէն, ձու, կամ այդ տեսակ որևէ

բան, հետոն էլ մի տոմսակ, որի մէջ յայտնում են իրանց շնորհակալութիւնը:

Եթէ ուշադրութեան առնուի, որ այդ ընծաները, մանաւանդ հարուստ զասակարգի մէջ, մինչև հարիւր կտորի է հասնում, ապա ուրեմն կարելի է երեակայել, թէ որչափ իրարանցումի ու հոգախ մէջ է ընկնում նորատի մայրը: Քաղցր խըսորիդէնը դարսում են փայտէ յղկած արկղիկների մէջ, որոնք կըկին վերադարձնում են բերողին, միայն թէ այդ արկղիկները վերադարձնելու ժամանակ ամենակին չպէտք է սրբուին, որովհետև ճափնացու հասկացաղութեամբ այդ բանը երեխարյին դժբախտութիւն կըբերէ:

Ահա այն ամենը, որով վերջանում է երեխայի աշխարհ գալու արարողութիւնը. և այնուհետև, մանուկը կարող է հանգիստ կերպով սկսել իւր կեանը: Յուրա եղանակին երեխան տանը նստում է մաքուր ու փափուկ խսիրների վերայ, որոնցով ծածկուած է սենեակի ամբողջ յատակը: Ծափոնացոց բնակարաններում կահ բոլորովին գոյութիւն չունի, այնպէս որ վտանգ չկայ թէ երեխան գլուխը կդիպցնէ որ և է չոր կարասիքի. նոցա տներում չկան աթոռներ, պահարաններ ապակեայ դռներով, կամ դարակներ զարդ ու զարդարանքով և, յախճապակէ մանր առարկաներով, որ երեխան քաշքաէ, կոտրտէ և ձեռք ու երեսը վիրաւորէ, մինչև անգամ տան պատերը փայտէ շրջանակների վերայ քաշած փափուկ թղթից են շինուած և ամենամեծ փորձանքն այն կարող է լինել, որ փոքրիկն յանկարծ իւր մատով կըծակէ այդ թղթէ պատը, էլ ուրիշ ոչինչ: Ճափոն մանուկներն իրանց շորն էլ կեղատուել չեն կարող նախ այն պատճառով, որ նորա մինչեւ 2-3 տարեկան հասակը մօր կաթով են կերակրում և մէկ էլ, որ տաք ամիսները նոքա համարեա մերկ են լինում:

Հարուստ ընտանիքներում երեխաններին հագցնում են նոյն տեսակի ու ձեր զգեստ, ինչպէս որ մեծերինն է. անչափ զուարճալի են այդ զանաճները, տղայ ու աղջիկներն, իրանց մետաքսէ երկար վկիմօնօշի ծալքերով ու գերծուած զլուխներով: Իսկ երբ նորա մեծերի օրինակով սկսում են ողջունել միմեանց կուանալով մինչև գետին, կամ թէ 3-4 տարեկան երեխաններն, երբ ճաշի են նստում մեծերի հետ միասին ու սկսում են ուտել ոչ թէ գդալներով ու դանակ պատառաքաղով, այլ ոսկորէ ձողերով, ինչպէս ընդունուած է այնտեղ, ծիծաղից թուանալ կարելի է:

Ճափոնիայում երեխանների վկից կախ են անում մի կտոր

երկաթէ տախտակ, որի վերայ գրուած է փոքրիկի ազգանունը ու հասցէն, որպէսզի եթէ նա կորչելու լինի, գտնուի շուտով. իսկ ամեն փորձանքից ու չար աչքից աղատ պահելու համար նորա գօտիին ամրացնում են մի «կինդակ» այսինքն՝ թանգ մետաքսէ կտորից մի տոպրակ, որի մէջ պահպանում է որ և է կախարդական միջոց. Ցուրտ եղանակին երեխային երկու երեք «կիմօնօ» են հազցնում իրար վերայից:

Աղքատ ընտանիքները, որ ճափոնիայում աւելի շատ են, քան հարուսաները, ի հարկէ, չեն կարող իրանց երեխաների մասին շատ էլ հոգալ. և նոցա որդիքը կամ բոլորովին մերկ են կամ միայն մէկ «կիմօնօ» են հազնում. Աղքատ մայրերը որովհետև շատ գործ ունին թէ տանը թէ պարտիզում ու դաշտում, այդ պատճառով երեխային մնակ չթողնելու համար նորան երկար ու լայն շերիտով կապում են իրանց մէջքին և դարձեալ վարժ կերպով շարունակ աշխատում են. իսկ թէ որ երեխան ունի 6—7 տարեկան քոր, նորան կապում են քոյրիկի շալակին:

Ճափոնիային որտեղ որ եղել եմ, գրում է Հէսաէ Վարտէզը, թէ քաղաքներում ու գիւղերում, թէ փողոցում ու հրապարակում, ամեն տեղ էլ ես հանդիպել եմ 7 տարեկանից մինչև 15 տարեկան աղջիկների, որոնց մէջքին կապուած են իրանց ծծկեր եղբայրը կամ քոյրը. և փոքրիկ մանուկին շատ ու շատ է դուր գալիս այդ դիրքը. նա ուրախ ու զուարթ իւր քոյրիկի ուսերից գլուխը վեր բարձրացրած, սև աշիկներով նայում է լոյս աշխարհին և այդ դիրքի մէջ նա օր օրուայ ու շաբաթ շաբաթուայ ետևից անցէ կացնում ժամանակը, մինչև որ կարողանում է ոտքը ենել ու մանգալ: Եւ հէնց որ այդ երեխան 5—6 տարեկան եղաւ, եթէ աղջիկ է, նա նոյնպէս այդ հասակին սկսում է դայեակի պաշտօն կասարել իւր նորածին քրոջ կամ եղբօր համար:

Փոքրիկ դայեակը շատ շուտով է ընտելանում իւր բեռին և աղատ կերպով վագլցում է փողոցում ու խաղում իւր ընկերակիցների հետ և նա ամենակին ծանրութիւն չի զգում, կարծես թէ երեխան նորա մէջքի վերայ բնականից կպած է եղել ինչպէս մի սապատ. ամբողջ ժամերով նա շալակած ման է ածում փոքրիկին, որը հանգիստ ու անվրդով քնում է նոյն իսկ այն միջոցին, երբ իւր դայեակը խաղում է ու դիպչում այս ու այն կողմ:

Ճափոնիայում շատ հաղիւ է պատահում, որ դայեակը վայր ձգէ երեխային. մանկիկն ինչպէս մի բնածին ձիաւոր ոտիկներով փաթթուում է դայեակի կողերին և ամուր տե-

դաւորւում է իւր թամքի վերայ: Եթէ երեխան քաղցի, դայեակը նստում է մօր կողքին կամ ծնկանը, իսկ փոքրիկը գլուխը շուռ է տալիս և ծծում է մօր կաթը, ինչպէս որ կարողանայ, և մայրը մինչեւ անգամ չի էլ բռնում ու օգնում նորան:

Չնայած այդ ամեն անյարմարութիւններին, ճափոն երեխանները կենսուրախ են, հանդարտ և բարեկիրթ. հազիւ է պատահած, պատմում է Հ. Վարտէգ, որ ես այնտեղ տեսած լինեմ մի որևէ է երեխայի լալով ու սուր ձայնով ճշալիս. երբէք չեմ տեսել այնտեղ չարութիւն անող երեխանների, կամ տղաններին միմեանց հետ կոռւելիս. և ծնողններն էլ նոցա երբէք չեն ծեծում. միայն երբեմն, եթէ փոքրիկը վատ բան արած լինի, ծնողնները նորան վախեցնում են «Օնի» կոչուած սատանայով, որն իրը երեխաններին պարկի մէջ հաւաքում ու տանում է. դա ճափոն մանուկների ամենամեծ զարհուրանքն է:

Ճափոնացիք երեխանների համար օրօրոց կամ մահճակալ չունեն. նորա մանկիկին բաւական տաք ջրի մէջ ու խնամքով լողացնում են. աղքատ դասը, որ իրան սեփական բաղանիքը չունի, երեխաններին հետը տանում է հասարակաց բաղնիքը:

Լողանալը, շարունակ մաքուր օդի մէջ լինելը և ազատ ու վտանգաւոր շարժումներ չունենալը, քանի որ իրանց քոյրիկների մէջքի վերայ նատած են մէկ դիրքով, այդ բոլորն ինչպէս երեսում է շատ բարերար ազդեցութիւն է անում ճափոն երեխայի առողջութեան վերայ. Այնտեղ աւելի քիչ են մեռնում երեխաններ, քան ուրիշ երկրներում և միակ, բաւական տարածուած, ցաւն է փոքրերի մէջ քոսը, որ երեսում է գլխի կամ մէջքի վերայ. քայց այդ ցաւն անցնելուն պէս, մանկիկը զարմանալի առողջ ու փարթամ տեսք է ստանում, և ծնողնները չեն կշտանում նորա վերայ նայելուց ու փայլուն ապագայ գուշակելուց: Ասենք աշխարհիս երեսին մը ծնողը իւր զաւակին չի. համարում ամենագեղեցիկը և ամենախելօքը:

Քիչ քիչ երեխան սկսում է խօսել և ապա մանգալ: Ճափոնական լեզուն, որ պարզ ու գեղահնչիւն է, փոքրիկը շատ շուտ է սկսում իւրացնել. առաջ արտասանում է «մամա» որ նշանակում է կերակուր. «բէրէշ» շոր. «տատա» գուլպայ. «իա» խօսքը նշանակում է ոչ, կամ թէ չեմ ուղում:

Երեխան սենեակում սկսում է մանգալ թէ չէ, նորան հագցնում են «գետա» որ փայտէ հողաթափներ են. և պիտի զարմանալ, թէ ինչպէս կարող է ճափոն մանուկն այդպէս հեշտութեամբ ընտելանալ այդ կոպիտ ու ծանր ոտնամանին և լումսն

նորանով էլ վաղվեկ, խաղալ ու թռչկոտել:

Ճափոնացի ծնողները մեծ հոգատարութեամբ ու սիրով են հետեւում իրանց զաւակների մեծանալուն. և կարելի է ասել թէ դէպի որդիքն ունեցած միակ սէրն է, որ ընդունում են նորա: Մայրերն ուշադրութեամբ սովորեցնում են ու խրատում իրանց փոքրիկներին և հազիւ է պատահում, որ պատժեն: Նախապաշարմունքը մեծ տեղ է բռնում նոցա երեխաների կրթութեան մէջ. եթէ տան մէջ ծաղիկ կամ այլ վարակիչ հիւանդութիւն կայ, հոգատար հայրը իւր տան դռան վերայ գրում է «Երեխաները տանը չեն» որ իբր չար ոգիները տան շէմքից չանցնեն: Երեխաների մէջ ստախօսութիւն ըիչ է պատահում. իսկ թէ մէկը մի անմեղ սուտ ասի, սպառնում են որ չար «Օնի» ստանան նորա լեզուն կըկտրէ:

Տղաներն այստեղ շատ աւելի ազատութիւն են վայելում քան աղջիկները: Տղան ինքն է իրան համար կեանքի ճանապարհ հարթում. նա է իւր հօր ժառանգը, որ և ուսումնասիրում է հօր արհեստը. նորա առաջ բաց են և ուրիշ աշխատանքի դռները:

Իսկ օրիորդներինը այլ է. նոքա պէտք է միայն սովորեն ամուսին գտնել և նոցա միշտ իրանց հետ պահել. Աղջիկն իւր կամքը չպիտի ունենայ. չպիտի ցոյց տայ ոչ իւր բարկութիւնը, ոչ գժգոհութիւնը, ոչ էլ տանջանքը, այդ ամեն զգացմունքը նա պարտաւոր է ծածկելի հաճելի ժպիտի տակ, քաղաքավարի ձեերով և մի քիչ էլ նազելով. նա պէտքէ սովորի ոչ միայն իւր կեանքը բաղցրացնել, այլ և ուրիշներինը:

Բարեբաղդաբար այդ ամենը ճափոնացի օրիորդներին շատ բնքշութեամբ ու անգիտակցաբար է ներշնչւում. և առ հասարակ աղջիկ զաւակը հօր տան սիրելին է. թէ հայրն ու մայրը և թէ եղբայրները նորա հետ սիրով ու գուրգուրանքով են վարւում, իսկ ծառաները վերաբերւում են մեծ յարգանքով:

Աղջիկը տնային բոլոր գործերը աննկատելի կերպով, կարծես խաղալով է սովորում: Ճափոնիայի տան հոգսերն այնպէս բարդ չեն ինչպէս որ մեղանում է, որովհետև նոցա պարզ, մէկ յարկանի բնակարանների մէջ չկան կարասիք, պատկերներ, գորգեր, հայելիներ ու մանր մունր զարդարանքներ, նոյն իսկ չկան պատուհաններ. սենեակները բոլորովին դատարկ են և միայն յատակների վերայ խսիրներ են փուռած. իսկ պատերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ թղթէ պատուարներ (շիրմաներ) և ի հարկէ, այդպիսի տունը մաքուր ու կարգին պահելը դժուար չէ: Նոցա անկողինները բաղկացած են դօշակներից, որոնք գի-

շերները յատակի վերայ են գցւում քնելու համար, իսկ ցերե-  
կը նորից տանում պահում են, ինչ վերաբերում է կերա-  
կրին, ճափոնացի օրիորդը ստիպուած չէ սովորելու խոհարա-  
բական արհեստը, որովհետև այնտեղ ամենից երես առած տղա-  
մարդն անգամ չի պահանջում իւր կնոջից նուրբ կերակուրներ  
եթելու շնորհը. ճափոնացիք առաւօտն ուտում են խաշած  
բրինձ, ճաշին բրինձ և երեկոյեան դարձեալ բրինձ. երբեմն  
միայն չորացրած ձուկ ու եփած մրգեր են առաջ բերւում ճա-  
շի ժամանակ և ահա նոցա ամենօրեայ խորտիկների ցուցակը:

Ճափոնացիք գործ չեն զնում նաև հաշիաներ ու նուրբ  
սպիտակեղին. նոքա չեն հագնում ոչ պարահանդէսի զգեստ  
և ոչ գլխարկներ, որ պէտք լինէր չարչարուել դոցա վերայ:  
Միակ բանը, որ պահանջում է ճափոնացի օրիորդից, այդ  
կարել զիանալն է: Նոցա պարզ ձևի «կիմօնօ»-ն և սպիտակե-  
ղինը գերձակուհու ձեռքը տալու հարկ չկայ, բանի որ ինքն  
օրիորդն է կարում. և եթէ հագուստը կեղտուուի, նա նորից  
քանդում է ամբողջը, լուանում է սառը ջրով առանց սապոնի  
և նորից կարում ու հագնում է: Ճափոնուհին ութօի մասին  
գաղափար չունի. գուլպա ու կօշիկ նա համարեա չի հագ-  
նում. իսկ գլուխների զարդն է միայն սիրուն սանդրուածքը,  
որը զարդարում են զանազան տեսակի քորոցներով ու ծաղիկ-  
ներով. ճափոնուհին շարաթը մէկ անգամ է իւր գլուխը սանդ-  
րում. դորա համար առանձին կանայք. կան, որոնք չնշին վար-  
ձով սարքում են նոցա մազերը:

Ճափոնուհու մտաւոր զարգացումը մինչև վերջին տասնա-  
մեակը նորանից շատ քիչ ժամանակ էր խլում. Միկադօյի  
թագաւորութեան մէջ աւելի չնշին բաներով էին զբաղեցնում  
աղջիկներին. զորօրինակ՝ ինամքով սովորեցնում էին նոցա  
թէյի արարողութեան գաղտնիքը, որը նոցա լեզուով կոչւում է՝  
«չա-նո-իւ.» Նոքա սովորում էին թէ ինչպէս պէտք է իւր  
ընդունել և ճանապարհ դնել. սիրուն ու ճաշակով փունջ կա-  
պել, «սամիզէնա-ի վերայ նուագել: Իսկ հարուատ ընտանիքները  
աղջկան սովորեցնում էին եւ պար ու պանտօմիմա, որ նա  
կարողանար թէ ծնողներին և թէ հիւրերին զբաղեցնել:

Վեցից մինչև տասը տարեկան հասակը ճափոնացի օրի-  
որդը գնում էր որևէ մասնաւոր դպրոց, որտեղ սովորում էր  
կարդալ և գրել ճափոնական ու չինական նշանագրերը, չի-  
նական գրականութիւնը, ճափոնական գնդարուեստը և պատմու-  
թիւնը: Իսկ թուաբանութիւն, աշխարհագրութիւն, ընդհա-  
նուր պատմութիւն և ուրիշ առարկաներ միայն այս վերջին

տասը տարուայ մէջ թիչ քիչ մտել են այդ գպրոցների ծրաւ գրներում:

Այժմ Տօկիօլում, Եօկօհամում և ուրիշ բաղաքներում, որ տեղ եւրոպական կուլտուրան մեծ քայլեր է անում, շատ տարա օրինակ է փոխանակ նաշխուն «կիմօնօ» հազած ճափոն երեխաների, տեսնել աշակերտների ու աշակերտուհիների եւրոպական ձևի հագուստով և գրքերը կուն տակը դրած: Տէրութեան այդ կարգադրութիւնը ծնողներին միայն հոգսի ու ծախսի տակ է զցում: Տղաների համար եւրոպական ձևի կրթութիւնը դեռ օգուտ բերել կարող է, բայց աղջիկների համար այդ ձևը նոցա ամբողջ կեանքի մէջ յեղացրջում կառաջացնէ և մինոյնը տեղի կունենայ բոլոր ժողովրդի թէ կուլտուրայի և թէ կեանքի մէջ: Արգեօք այդ բանի համար որևէ բարոյական հիմք կմյ, հարցնում է Հեսսէ Վարտէգ:

Տղաներն ու աղջիկները ծափոնիայում աւելի երկար ժամանակ դեռ երեխայ են մնում քան այլ տեղերում. նոքա շատ ուրախ ու կայտառ են, խաղում են զանազան խաղեր, շատ են սիրում հեքիաթներ և տօն օդեր, որոնք ծափոնիայում անթիւ ու անհամար են: Տոներին երեխաներին հագցնում են լաւ կտորից գոյնզգոյն «կիմօնօ», զուգում են ինչպէս խամաճուկները: Շատ զուարձալի տեսարան է, երբ տօն ժամանակ աղջիկ փոքրիկներն իրանց ներկուած շրթունքներով ու երեխներով, պապուն աչքերով, պայծառ գոյնի շորեր հազած, փայտէ հողաթափները ոտներին, ծնողների հետ միասին զբօնում են դէպի մեհեանները տանող փողոցներում և ուրախ-ուրախ նայում խանութներում դրուած հետաքրքիր, սիրուն առարկաներին և խաղալիքներին, որոնց արտադրութիւնը չափազանց տարածուած է ծափոնիայում:

Աղջիկների ամենասեծ տօնը խամաճուկների տօնն է, որը կատարում է ամեն տարուալ երրորդ ամսի երրորդ օրը. և այն ժամանակ Միկալօյի տէրութեան մէջ համարեա տուն չի ինուս, որ արկդների միջից չհանէ բոլոր հաւաքուած խամաճուկները, չմաքրէ ու չզարդարէ և սիրուն ճաշակնվ պատւանդաների վերայ չտեղաւորէ սենեակում: Եւ այդ ժամանակ ինչպէս երջանիկ են երեխաները: Հարցուատ տներում այդ օրը լոյս աշխարհը են գալիս մինչև հարիւր տիկնիկներ, որոնց մի մասը տոհմական ժառանգութիւն է մնացած և որոնք մեծ մասը ներկայացնում են հին թագաւորներին, թագուհիներին և պալատականներին գեղեցիկ ու փառաւոր զգեստներով: Այդ տօնին փոքրիկ աղջիկներն իրանց խամաճուկների համար ճաշ-

են պատրաստում շատ պստիկ ամանների մէջ ու նոցա հիւրա-  
սիրում են ափսէնների մէջ լցրած: Նոքա տանում են իրանց  
սիրելի խամաճուկներին մանգալու, նոցա շորերը հանում ու  
նորից հազբնում են. և այդ տօնը տևում է երեք օր. ապա  
նորից բոլոր տիկինիկներն իրանց արդ ու դարդով պահում  
են յատուկ արկղիկների մէջ մինչև գալող տօնին:

Հասարակաց տօներին երեխաններն էլ մեծերի հետ զբաղ-  
ւում են. փողոցում եղած ժամանակ նոքա խաղում են գնդակ,  
բզզան, թղթէ օձ են շինուած ու օդի մէջ բաց թողնուած, իսկ  
ձմեռը նոքա սենեակի մէջտեղում զրուած հիբաշիւ-ի (կրակա-  
րան, կէծացած ածուխը մէջը) շուրջը բոլորուած, թուղթ են  
խաղում կամ թէ ճափոնական գեղեցիկ հեքիաթներն են լսում  
իրանց տատերից ու հօրաքոյըններից. այս վերջիններս կոչւում  
են «օ-բա-սան».

Տղաներն էլ իրանց առանձին տօնն ունին, որ ասւում  
է՝ «ղրօշակների տօն» և այդ լինում է տարուայ հինգերորդ  
ամսի, հինգերորդ օրը՝ Ամեն տան մէջ, որտեղ մանչ տղայ կայ,  
այդ օրը բամբուկէ ձողերի վերայ կապում են ահազին մեծու-  
թեամբ գոյնզգոյն թղթէ ձկներ և այդ ձողերն էլ ամրացնում  
են տան կտուրներին. թղթէ ձկները քամուց սկսում են ուռչել,  
դառնում են օգապարիկի նման և այդ ժամանակ ամբողջ քա-  
ղաքը մի տարօրինամկ տեսը է ստանում հազարաւոր նաշխուն,  
թռչող ու տարուրերող ձկներով: Տղաներն այդ տօնին զինուո-  
րական զգեստ են հագնում, զրօնում են զանազան գոյնի  
դրոշակները ձեռքերին և քաղցրեղէն է որ ուսում վայելում,  
շարունակ:

Ճափոն երեխանների համար ամենամեծ տօնն այն է, երբ  
ծնողներն իրանց հետ նոցա տանում են թատրոն, երեխա-  
նները մեծ ուշադրութեամբ հետեւում են պատմական ներկայա-  
ցումներին և իրանց անգեալի հետ քիչ շատ ծանօթանում:

Այստեղ ոչ մի բան այնպէս եւրոպացու աշքին չի ընկ-  
նում, ինչպէս ճափոնացու բնաւորութեան մի ազնիւ կողմը  
այն է ծնողներին լարգելը. այդ բանն այնքան արդէն հեռու է  
ժնում, որ ամեն անգամ երբ հայրը տուն է մտնում ու դուրս  
գալիս, բոլոր երեխանները պիտի ծունկ չոքեն և ճակատները  
գետնին կպցնեն: Ոչ մի տեղ աշխարհիս երեխին երեխայի  
հանագանդրութիւնը դէպի ծնողն ամենից առաջին առաքինու-  
թիւնը չի համարւում, ինչպէս ճափոնիայում: Եւ այդ դէպում  
ուրիշ ազգերի զաւակները լաւ կանէին, եթէ օրինակ վերցնէ-  
ին ճափոնացի երեխաններից: ՏԻՐՈՒՀԻ ԿՈՍՏԱՆՆԵԱՆՑ